ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-399-18.10.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1553 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-399-18.10.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տվյալներով 2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում արտադրված և ներմուծված գարեջրի ծավալը կազմել է 22.6 մլն լիտր, որից 17.9 մլն լիտրը (կամ 79.4%-ը) արտադրվել է Հայաստանի Հանրապետությունում, իսկ 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետությունում արտադրված և ներմուծված գարեջրի ծավալը կազմել է 21.6 մլն լիտր, որից 17.6 մլն լիտրը (կամ 81.5%-ը) արտադրվել է Հայաստանի Հանրապետությունում: Այսինքն, 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետությունում արտադրված և ներմուծված գարեջրի ընդհանուր ծավալներում Հայաստանի Հանրապետությունում արտադրված գարեջրի կշիռը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 2.1%-ով, ինչը նշանակում է, որ գարեջրի իրացման շուկայում տեղական արտադրության գարեջրի մրցակցային դիրքերը չեն վատացել: Ընդ որում, ակցիզային հարկի արդյունավետ (միջին) դրույքաչափը 1 լիտր գարեջրի համար 2018 թվականին կազմել է 113.9 դրամ, իսկ 2017 թվականին՝ 116.3 դրամ:

Այդ կապակցությամբ, հայտնում ենք, որ նախագծի ընդունման հիմնավորմամբ բարձրացված խնդիրը իրապես կարող է գոյություն ունենալ, սակայն գարեջրի ոչ բոլոր գնային սեգմենտներում: Մասնավորապես, խնդիրը կայանում է նրանում, որ եթե ԵԱՏՄ անդամ համարվող պետություններից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվում հիմնականում ցածր և միջին գնային դասի գարեջուր, ապա ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվում հիմնականում բարձր գնային դասի գարեջուր: Հետևաբար, գարեջրի մասով ակցիզային հարկի միայն հաստատուն դրույքաչափի կիրառությունը կնշանակի, որ ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բարձրարժեք գարեջրի գնի կառուցվածքում ակցիզային հարկի տեսակարար կշիռը էականորեն ցածր է լինելու Հայաստանի Հանրապետությունում արտադրվող կամ ԵԱՏՄ անդամ համարվող պետություններից ներմուծվող՝ ցածր և միջին գնային դասի գարեջրի գնի կառուցվածքում ձևավորվող ակցիզային հարկի տեսակարար կշռի համեմատությամբ: Արդյունքում նախադրյալներ են ստեղծվելու, որպեսզի ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող բարձրարժեք գարեջրի գինը նվազեցվի՝ դրանով իսկ մրցակցության մեջ մտնելով տեղական արտադրության գարեջրի հետ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ առավել նպատակահարմար է գարեջրի համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը վերանայել այնպես, որպեսզի ցածր և միջին գնային դասի գարեջրի համար բոլոր դեպքերում կիրառելի լինի հաստատուն դրույքաչափը՝ անկախ այն հանգամանքից, թե խոսքը վերաբերում է տեղական արտադրության, թե ԵԱՏՄ անդամ համարվող կամ ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող գարեջրին, իսկ

բարձր գնային դասի գարեջրի համար այդուհանդերձ կիրառելի լինի ակցիզային հարկի տոկոսային դրույքաչափը:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ անհրաժեշտ է տարեցտարի որոշակիորեն բարձրացնել գարեջրի համար սահմանվող ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափը, քանի որ՝

1) քաղաքականության այս ուղղությունն իրականացվում է նաև ակցիզային հարկով հարկման ենթակա այլ ապրանքների մասով,

2) ԵԱՏՄ անդամ պետություններում նույնպես իրականացվում է ալկոհոլային խմիչքների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերի աստիճանական բարձրացման և ներդաշնակեցման քաղաքականություն,

3) եթե ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերը ժամանակին զուգընթաց չեն բարձրացվում, ապա ապրանքների գնաճի արդյունքում շարունակաբար նվազում է գնի կառուցվածքում ակցիզային հարկի մասնաբաժինը,

4) սպառման հարկերի, այդ թվում՝ ակցիզային հարկի դրույքաչափերի աստիճանական բարձրացման և դրա հաշվին ուղղակի հարկերի նվազեցման քաղաքականությունը, որպես ծրագրային դրույթ, ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում:

Բացի դրանից, հայտնում ենք, որ խնդրո առարկա հարցը մանրամասն քննարկվել է նաև առաջիկայում իրականացվելիք՝ հարկային բարեփոխումների ուղղությունների քննարկման շրջանակներում: Քննարկումների սկզբնական փուլում նախնական որոշում կայացվեց հանել գարեջրի համար սահմանված ակցիզային հարկի տոկոսային դրույքաչափը և զուգահեռաբար բարձրացնել հաստատուն դրույքաչափը, սակայն հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները՝ առաջարկվել է մեկ անգամ ևս քննարկել բարձրարժեք գարեջրի համար այդուհանդերձ տոկոսային դրույքաչափ կիրառելու նպատակահարմարությունը:

Ամփոփելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է, որ առաջիկա հարկային բարեփոխումների շրջանակներում անդրադառնալու է խնդրո առարկա հարցի առավել համակողմանի կարգավորմանը և առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի քննարկումից ու ընդունումից՝ մինչև հարկային բարեփոխումների շրջանակներում իրականացվող քննարկումների ավարտը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018 թվականի N 1553- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-399-18.10.2018-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 21
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-399-18.10.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի՝ ԱՏԳ ԱԱ 2203 ծածկագրի տողի 4-րդ սյունակից հանել «30 տոկոս, բայց ոչ պակաս, քան» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Սույն նախագիծը նպատակ է հետապնդում հավասար մրցակցային դաշտ ստեղծել գարեջուր ներկրողների եւ տեղական արտադրողների միջեւ:

Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության վիճակագրական տվյալների համաձայն վերջին տարիներին նկատվում է գարեջրի ներմուծման ծավալների զգալի աճ: Եթե 2014թ-ին Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 2837.5հազ. լիտր գարեջուր, ապա 2017թ-ին՝ 4481.8 լիտր, աճը կազմում է 58 տոկոս: Գարեջրի ներմուծման ծավալի 75 տոկոսից ավելին բաժին է հասնում Ռուսաստանի Դաշնությանը: 2014-2017թթ-ին Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված 1 լիտր գարեջրի մաքսային միջին արժեքները կազմել են համապատասխանաբար 369.94, 335.76, 276.70 եւ 317.51 դրամ:

Քանի որ զգալիորեն նվազել են ներմուծված գարեջրի մաքսային արժեքները եւ ակցիզային հարկի արժեքային դրույքաչափը չի գործել, ուստի ներմուծված գարեջրի ակցիզային հարկը սկսած 2015թ-ից վճարվել է նվազագույն՝ 1 լիտրի համար 105 դրամ դրույքաչափով: Իսկ 2015-2017թթ-ի տեղական արտադրության համադրելի գարեջրի 1 լիտրի միջին գինը առանց ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի կազմել է 375-380 եւ ավելի դրամ, որի դիմաց վճարված ակցիզային հարկի միջին դրույքաչափը կազմել է 112-115 դրամ:

Փաստորեն ստացվում է, որ օրենսգրքով սահմանված ակցիզային հարկի արժեքային եւ կայուն դրույքաչափերի կիրառման նորմը գործում է իվնաս տեղական արտադրողի, քանի որ վերջինս ստիպված է եղել 2015-2017 թթ-ին իրացված յուրաքանչյուր լիտր գարեջրի համար 7-10 դրամ ավել ակցիզային հարկ վճարել, քան ներկրողը:

Նախագծի ընդունմամբ գարեջրի ակցիզային հարկի նկատմամբ կսահմանվի միայն կայուն դրույքաչափ, որի արդյունքում կստեղծվի հավասար մրցակցային դաշտ, թե ներկրողի եւ թե տեղական արտադրողի համար եւ անուղղակիորեն կպաշտպանվի տեղական արտադրողը: Միաժամանակ կպարզեցվի եւ կհստակեցվի նաեւ հարկի գանձման մեխանիզմը: